

ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

Անասուններու տեսակներ ու մարմնի չափ





Այս անասունները տեսած ես. ո՞ր:

Տուր անունը այս անասուններուն:

Անասունները զանազան խումբերու կրնանք բաժնել:

Ներկէ՛.—

կանաչ՝ օդի մէջ թռչող անասունները:


դեղին՝ ջուրի մէջ ապրող անասունները:

կարմիր՝ ցամաքի վրայ բալող անասունները:

Վայրի եւ ընտանի անասուններ

Ընտանի անասունները կ'ապրին մարդոց մօտ-
անոնք մարդոց կը ծառայեն:

Վայրի անասունները կ'ապրին անտառներու,
դաշտերու կամ ամայի վայրերու մէջ:



Ներկէ՛ կարմիր՝ վայրի անասունները:

Գրէ՛ անունները՝ ընտանի անասուն-
ներուն:

Տո՛ւր երեք ընտանի եւ երեք վայրի անասուննե-
րու անուններ:

Անասունները սնունդի պէտք ունին՝ ինչո՞ւ:

Գիտե՞ս, ուրիշ ի՞նչ բանի պէտք ունին:



Մսակեր անասունները միտով կը սնանին:
Անոնք իրենցմէ աւելի փոքր անասուններ եւ
միջատներ կ'ուտեն:



Բուսակեր անասունները խոտ, պտուղ կամ կանաչեղէն կ'ուտեն:



Նապաստակը կաղամբի կամ ուրիշ բանջարեղէններու տերեւներ կ'ուտէ:

Նպաստակը եթէ փայտի կտոր մը գտնէ, կը սկսի կրծել. ինչո՞ւ:

Թռչունները ակոյ չունին. անոնք իրենց կերը
կը կտցեն եւ առանց ծամելու կը կլլեն:



Ամենակեր անասունները կրնան թէ՛ մսեղէն եւ
թէ՛ կանաչեղէն ուտել:









Ամբողջացն'ւր:

	Մսակեր	Բուսակեր	Ամենակեր
Կով		✓	
Վագր			
Այծ			
Մարդ			
Ափաղաղ			
Գայլ			
Ոչխար			
Արծիւ			
Ձուկ			
Օձ			

Տուր երկու վնասակար անասուններու անուններ:

Փակցո՛ւր անասունին պատկերը:



Անասուններուն մարմինները ծածկուած կ'ըլ-
լան մագով, մուշտակով կամ բուրդով:



Ոչխարին մագերը կը կոչուին բուրդ:
Նապաստակին մագերը կը կոչուին մուշտակ:
Զիուն մարմինը ծածկուած է ստեւներով, իսկ
վիզի առատ մագերը կը կոչենք բաշ:

Տո'ւր ստեւներով ծածկուած երեք անասուննե-
րու անուններ:

Գիտե՞ս աղուէսին մարմինը ինչով ծածկուած է:


Թռչուններու մարմինը փետուրով ծածկուած է:




Հաւ եւ ափաղաղ

Ամբողջացո՛ւր:

կտուց, աչք, ոտք, թեւ, պոչ, փետուր:



Ամբողջացո՛ւր եւ ներկէ ափաղաղը:





Մարմինս ծածկուած է փետուրով,
Ունիմ կատար ու կտուց,
Երկու ոտք եւ երկու թև
Գիտե՞ս, թէ ո՛վ եմ ես:
Կրնա՞ս ինձի պէս երգել:

Չուկին մարմինը կլոր եւ տափակ թեփերով ծածկուած է:

Ամբողջացո՛ւր:

պոչ, լողակ, թեփ, աչք, բերան:




1

2


Ներկէ՛.— Թիւ 1 ձուկին բնավայրը:

Ո՞ր բնավայրին մէջ ձուկը աւելի երկար կ'ապրի: Ինչո՞ւ:



Օգնէ կրիային՝ իր պատեանին հասնելու:




Մարմնի մասը անասունին միացո՛ւր:



Անասունների զանազան ձեւերով կը յառաջանան:



Միջատներ



Քանի՞ ոտ ունին միջատները:
Բոլոր միջատները կրնա՞ն թռչիլ:






Մեղուն շատ օգտակար միջատ
մըն է:


Մեզի կու տայ համեղ եւ սնուն-
դարար մեղրը:



Մեղուին փոքին ծայրը կը գտնուի
սեւ ասեղ մը, որ մեղուին խայթոցն է:

Միացո՛ւր կենդանին իր ուտելիքին:





Ամբողջացն'ւր:



	ձի	կրիայ	նապաստակ	ձուկ	փիղ	կապիկ	շուճ	արծիւ	առիւծ	ընծուղտ	արջ	մրջիւն
բուսակեր												
մսակեր												
ամենակեր												
ընտանի												
վայրի												
միջատ												
բուրդ												
մուշտակ												
քանձրամորթ												
փետուր												
թեփ												
պատեան												
կը քալէ												
կը թռչի												
կը սողայ												
կը լողայ												
կը մագլցի												